ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9
Բնագիտականառարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի ապրիլի 29-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Հ.Մինասյանը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Տարեկան 200 ժամ և ավելի բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննություններ հանձնելու գործընթաց(զեկուցող՝ Ա.Սահակյան):
4. Մայիս ամսվա ընթացքում իրականացվելիք բաց դասերի և էքսկուրսիաների ցանկի և ժամանակացույցիներկայացում (զեկուցող՝ մ/մ անդամներ):
5. ԱՈՒՊ-ների ամփոփման շուրջ իրականացվող աշխատանքներ (զեկուցող՝ Ա.Սահակյան):
6. Անդրադարձ նախագծային աշխատանքներին (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ «Բնական աղետներ» և «Հիգիենայի կանոններ» թեմաներով անցկացված իրազեկման դասերը եղել են ուսուցողական և միտված են եղել ծրագրով սահմանված վերջնարդյունքների իրականացմանը:Զատկի տոնին նվիրված միջոցառումն անցկացվել է տոնին հատուկ խորհուրդների գեղեցիկ ցուցադրությամբ:Էքսկուրսիաները դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և կենդանաբանական այգի եղել են ուսուցողական և նպատակային: Երեխաները եղել են գոհ և տպավորված:Պատշաճ կերպով իրականացվել է ծնողական ժողովները, ծնողները ստացել են իրենց անհանգստացնող հարցերի պատասխանները: «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Կաթնասուններ» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7ա դասարանում «Բույսեր: Բույսերի աճեցում» թեմայով իրականացված նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվությունը ներկայացվել է տնօրենին, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) ներկայացնել էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին պաշարների շտեմարանում տեղադրելու նպատակով:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը նշեց, որ մասնախմբի այն անդամները, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև դասղեկներ, պետք է հետևողականություն ցուցաբերեն սովորողների

բացակայությունների հաշվառման նկատմամբ՝ պարբերաբար ամփոփելով առկա բացակաների քանակը մինչև ուսումնական տարվա ավարտը, նպատակ ունենալով պարզել 200 ժամը գերազանցող սովորողների առկայությունը, ովքեր ենթակա են լրացուցիչ գրավոր քննությունների: Բացի այդ Ա.Սահակյանը նշեց, որ բոլոր դասարանների լրացուցիչ քննական գրավոր աշխատանքների առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդական միավորումների կողմից առնվազն 3 տարբերակով:

Լսեցին՝

4. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց մասնախմբի անդամների կողմից մայիս ամսին նախատեսված աշխատանքները՝ նշելով, որ Կարեն Գիժլարյանը մայիսի 13-ին 7-րդ դասարանցիների հետ «Դրամ» թեմայի շրջանակում կկազմակերպի գործնական դաս խանութում՝ սովորողների գործնական և սոցիալական հմտությունների զարգացման նպատակով: Նշվեց նաև, որ Անահիտ Անդրեասյանը մայիսի 20-ին 6-րդ դասարանցիների հետ կանցկացնի «Թիվ, թվանշան» թեմայի ամփոփիչ դաս, իսկ մայիսի 13-ին 6-րդ դասարանի սովորողների համար կկազմակերպվի էքսկուրսիա բնության գրկում՝ Անահիտ Անդրեասյանի ուղեկցությամբ:

Լսեցին՝

5. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանն առաջարկեց ուսումնական տարվա ավարտին նախապատրաստվելու շրջանակում իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների արդյունքների ամփոփ վերլուծություն՝ գնահատելով սահմանված նպատակների կատարման մակարդակը, արձանագրված առաջընթացը և առկա դժվարությունները՝ ապահովելով տարեվերջյան քննարկումների արդյունավետ կազմակերպումը:

Լսեցին՝

6. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը նշեց, որ ապրիլի 28-ին ասարտվել է «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում իրականացվող «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով նախագծային աշխատանքը, իսկ մայիսի 12-ին ավարտվելու է «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Օրգան համակարգեր» թեմայով նախագծային աշխատանքը: Նշեց, որ անհրաժեշտ է իրականացնել նշված նախագծային աշխատանքների հանրայնացում, կազմել հաշվետվություններ, իսկ արդյունքները (պրոդուկտը) տեղադրել պաշարների շտեմարանում:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի ապրիլի 29-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել Մ/մ ղեկավար Ա. Սահակյանի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ իրականացվել են նախատեսված իրազեկման դասերը, միջոցառումները, էքսկուրսիաները և ծնողական ժողովները, ինչպես նաև ներկայացվել են նախագծերի հաշվետվություններն ու արդյունքները: Իրականացված աշխատանքները գնահատել բավարար:

3. Դասղեկներին հանձնարարել մինչև ուսումնական տարվա ավարտը շարունակաբար վերահսկել սովորողների բացակայությունների հաշվառումը՝ ժամանակին առանձնացնելով 200 ժամը գերազանցելու ռիսկ ունեցող սովորողներին:
4. Հաստատել մասնախմբի անդամների կողմից ներկայացված մայիս ամսվա ուսումնական աշխատանքների, ամփոփիչ դասերի և էքսկուրսիաների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն ստորև ներկայացված ժամանակացույցի.
    - «Դրամ» թեմայի շրջանակում գործնական դասը խանութում իրականացնել մայիսի 13-ին Կարեն Գիժլարյանի կողմից՝ սովորողների գործնական և սոցիալական հմտությունների զարգացման նպատակով:
    - «Թիվ, թվանշան» թեմայի ամփոփիչ դասն անցկացնել մայիսի 20-ին՝ պատասխանատու Անահիտ Անդրեասյան:
    - 6-րդ դասարանի սովորողների էքսկուրսիան բնության գրկում կազմակերպել մայիսի 13-ին՝ Անահիտ Անդրեասյանի ուղեկցությամբ:
5. Ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփմանն ընդառաջ իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին, առկա բացթողումներին և նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին:
6. «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Օրգան համակարգեր» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով նախագծեր իրականացրած ուսուցիչներին հանձնարարել մայիսի 3-րդ շաբաթվա ընթացքում իրականացնել հանրայնացում, կազմել նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվություն և ներկայացնել տնօրենի, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) ներկայացնել էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին պաշարների շտեմարանում տեղադրելու նպատակով:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ա.Սահակյան**

Քարտուղար՝ **Ա.Խուբլարյան**

06.05.2026